Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ բաժնետերերի

31/01/2024թ. արտահերթ ընդհանուր ժողովի կողմից

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

Գործադիր Տնօրեն՝ Անահիտ Շաքարյան

Փոփոխվել է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ բաժնետերերի

24/12/2025 արտահերթ ընդհանուր ժողովի կողմից



«ԻՆՎԻԱ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐ

(նոր խմբագրություն)

2026թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 3

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

2. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄԸ 5

3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 6

4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ 7

5. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 8

6. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 10

7. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԹԱՐՄԱՑՈՒՄ 10

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԵՎ ԱՊԱԱԿՏԻՎԱՑՈՒՄ 10

9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՑ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻՍ 11

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ 12

11. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 12

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Ինվիա Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության Հաճախորդների էլեկտրոնային եղանակով հաշիվների բացման և վարման, էլեկտրոնային ստորագրությունների օգտագործման և էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման կարգը կարգավորող կանոնները(այսուհետ՝ *«Կանոններ»*) մշակված են Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտերի, և Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

Մուտք գործելով վեբ/բջջային հավելված (*այսուհետ՝ «Հավելված»)* «Գրանցվել» կոճակի միջոցով անցնելով Գրանցման գործընթացը և հաստատելով Գրանցումը Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը՝ պարտավորվելով պահպանել սույն Կանոնները:

Հաճախորդները պետք է լինեն չափահաս և գործունակ՝ իրենց ռեզիդենտության օրենսդրության համապատասխան: Հաճախորդները պատասխանատու են իրենց իրավասությանն առնչվող օրենքներն ու կանոնակարգերը հասկանալու և վերջիններիս համապատասխանելու համար: Սույն Կանոնները ենթակա են պարբերական վերանայման:

Յուրաքանչյուր շահագրգիռ անձ, Ընկերության կայքէջում՝ **www.inviabroker.com**, կարող է ծանոթանալ Կանոններին:

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև նշված հասկացությունները սույն կանոներում կիրառվում են ստորև նշված իմաստներով.

Ընկերություն կամ Բրոքեր՝ «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

Օրենք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Հավելված՝ ծրագրային համակարգի վեբ/բջջային հավելված, որը պատկանում է «Ինվիա Ինվեսթմենթ» ՓԲ Ընկերությանը և աշխատում է **inviabroker.com** տիրույթում, որի միջոցով իրականացվում են ֆիզիկական անձ Հաճախորդի և Բրոքերի միջև Պայմանագրի կնքումը, Պայմանագին և/կամ Պայմաններին համապատասխան Բրոքերային և այլ հաշիվների բացումը, Հանձնարարականների ներկայացումն ու կատարումը, հաշվետվությունների և/կամ Հաճախորդի կողմից ներկայացված Հանձնարարականների, կատարված գործարքների և այլ տեղեկատվության ներկայացումը, ինչպես նաև Հաճախորդի և Բրոքերի միջև հաղորդակցումն ու հաղորդագրությունների/տեղեկատվության փոխանակումը:

Էլեկտրոնային հասցե՝ Հաճախորդի կողմից տրամադրած վերջին էլ. հասցեն, որը նշված է Ընկերության հավելվածի՝ Հաճախորդի անձնական հաշվում:

Հեռախոսահամար՝ Հաճախորդի հեռախոսահամարը, որը նշվել է Ընկերության հավելվածում՝ գրանցման գործընթացի ժամանակ:

Նույնականացում՝ գործընթաց, որի միջոցով Համակարգը ստուգում է օգտագործողի ինքնությունը՝ նույնականացումը ապահովելու համար, որը ներառում է հաստատում՝ եզակի կենսաբանական հատկությունների միջոցով, ինչպիսիք են օրինակ դեմքի ճանաչումը:

Հաստատման կոդ՝ թվային նիշերի հատուկ շարք, որը ստեղծվել և ուղարկվել է Ընկերության կողմից Հաճախորդին մեկանգամյա օգտագործման նպատակով՝ սահմանափակ ժամանակահատվածում, մասնավորապես՝ էլեկտրոնային փաստաթուղթ կամ էլեկտրոնային փաստաթղթերի փաթեթ ստորագրելիս:

Հաճախորդ՝ ֆիզիկական անձ, որը համաձայնել է Ընկերության հետ օգտագործել էլեկտրոնային ստորագրությունները եւ կիսել էլեկտրոնային փաստաթղթերը, ինչպես նաեւ բացել է հաշիվ ընկերության հավելվածի միջոցով եւ օգտվում է ընկերության ծառայություններից:

Էլեկտրոնային ստորագրություն՝ էլեկտրոնային փաստաթղթերի ստորագրման համար օգտագործվող ձեռագիր ստորագրությանը հավասարազոր համարժեքը, որը հաստատվում է Ընկերության կողմից ստեղծված թվային նշանների հատուկ շարքի մուտքագրմամբ և Հաճախորդի հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին ուղարկված կարճ տեքստային (SMS կամ e-mail) հաղորդակցության կամ կամ **INVIA** բջջային հավելվածի push-ծանուցման միջոցով::

Անձնական հաշիվ: Կորպորատիվ տեղեկատվական համակարգ, որը գտնվում է inviabroker.com տիրույթում, որը ծրագրային ապահովման և տեխնիկական միջոցների (համակարգչային սարքավորումների) հավաքածու է: Հաճախորդի մուտքը, որն իրականացվում է մուտքի և գաղտնաբառի միջոցով նախատեսված է փաստաթղթերի փոխանակման և այլ գործողություններ կատարելու նպատակով, որոնք նախատեսված են կորպորատիվ տեղեկատվական համակարգի գործունակությամբ՝ Ընկերության և Հաճախորդի միջև կանոնների համաձայն:

Գաղտնաբառ՝ նիշերի գաղտնի հաջորդականություն, որը հայտնի է միայն Հաճախորդին, որն օգտագործվում է հավելվածում Հաճախորդի անձնական հաշիվ մուտք գործելու նպատակով:

Էլեկտրոնային փաստաթղթերի ռեեստր՝ Հաճախորդի անձնական հաշվի տվյալների բազայում առկա աղյուսակ, որը տեղեկատվություն է գրանցում Հաճախորդի կողմից հավելվածիմիջոցով գեներացված բոլոր էլեկտրոնային փաստաթղթերի մասին:

ԷսԷմԷս Հաղորդագրություն (ԷսԷմԷս)՝ (կարճ հաղորդագրությունների ծառայություն) կապի միջոց է, տեխնոլոգիա, որը թույլ է տալիս ստանալ և փոխանցել կարճ տեքստային հաղորդագրություններ (SMS հաղորդագրություններ) բջջային հեռախոսի միջոցով:

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ փաստաթուղթ, որում տեղեկատվությունը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, որը հարմար է մարդու կողմից էլեկտրոնային հաշվողական մեքենաների միջոցով ընկալման, ինչպես նաև տեղեկատվական և հեռահաղորդակցական ցանցերի միջոցով փոխանցման կամ տեղեկատվական համակարգերում մշակման համար:

Բրոքերային գործունեություն՝ Ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում:

Պատվեր՝ Արժեթղթերով գործարքների կնքման նպատակով ներկայացվող հաճախորդի հանձնարարականը, ինչպես նաև Ընկերության կարգադրությունը, հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը:

Հանձնարարական՝ Հաճախորդի կողմից Պայմանագրով և/կամ սույն Կանոններով համաձայնեցված եղանակներով Բրոքերին ներկայացվող և Հաճախորդի Միջոցների հաշվին Բրոքերի կողմից կատարման կամ Բրոքերի կողմից երրորդ անձանց ի կատարում հաղորդման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, էլեկտրոնային կամ ձայնային հաղորդագրություն, որի նպատակը Հաճախորդի կողմից Արժեթղթերի օտարումը կամ ձեռքբերումն է:

Հաղորդագրություն՝ ցանկացած տեղեկատվության առաքում, փոխանակում, ծանուցում, Հանձնարարականի ներկայացում, որ տեղի է ունենում Հաճախորդի և Բրոքերի Պայմանագրի շրջանակներում:

Սույն կանոներում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են Օրենքով և Օրենքի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված իմաստներով

2. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄԸ

2.1 Ընկերության Հավելված մուտք գործելով հատուկ դաշտերում անձնական տվյալներ, էլ. հասցե և հեռախոսահամար տրամադրելու միջոցով, մուտք գործելու համար առանց Ընկերության սպասարկող աշխատակիցների հետ առերես շփման անհրաժեշտ նույնականացման/ստուգման ապահովմամբ, Ընկերության կողմից սահմանած ձևանմուշով Պայմանագիրը (հայտ-պայմանագիրը) Հաճախորդի կողմից հաստատելու պահից Հաճախորդը հաստատում է գործարար հարաբերություններ՝ հաշիվների բացման միջոցով:

2.2 Հեռախոսահամարը մուտքագրելուց հետո համակարգը ինքնաշխատ կերպով ստեղծում և տրամադրված հեռախոսահամարին է ուղարկում չորսանիշ հաստատման/ նույնականացման կոդ: Հավելվածի համապատասխան դաշտում մուտքագրելով հաստատման/նույնականացման կոդը՝ Հաճախորդը հստակորեն հայտնում է Ընկերության Հաճախորդ դառնալու իր ցանկությունը:

2.3 Հաճախորդը մուտքագրում է ճշգրիտ և թարմացված անձնական տվյալներ համապատասխան դաշտերում և վերբեռնում է անձը հաստատող փաստաթուղթ և/կամ լուսանկարով այլ պաշտոնական փաստաթուղթ (օրինակ՝ անձնագիր, նույնականացման քարտ):

2.4 Հաճախորդը տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը

2.4.1. Անուն, ազգանուն, հայրանուն,

2.4.2. Անձի հաշվառման հասցե

2.4.3. Պաշտոն

2.4.4. տեղեկատվություն եկամուտների աղբյուրի վերաբերյալ

2.4.5. Հաճախորդի՝ ԱՄՆ հարկային ռեզիդենտ և/կամ ոչ ռեզիդենտ լինելու վերաբերյալ տեղեկատվություն:

2.5 Հաճախորդը ավարտում է նույնականացման գործընթացը հավելվածի միջոցով՝ հետևելով դեմքի ճանաչման նպատակով կատարվող հրահանգներին, ներառյալ "սելֆի/ինքնանկար" նկարելը և իրական ժամանակում ստուգում անցնելը:

2.6 Հաճախորդը պարտավորվում է պահանջվող տեղեկությունները Ընկերությանը տրամադրել պահանջվող ձևով, անհրաժեշտ հաստատմամբ/ստուգմամբ և Ընկերությանը անհապաղ տեղեկացնել տրամադրված տեղեկություններում ցանկացած փոփոխության մասին:

2.7 Գրանցման գործընթացն ավարտելուց հետո Հաճախորդը ստանում է հաշվի բացման մասին ծանուցում՝ հաստատման հղում, Հաճախորդի կողմից նշված էլ.փոստի հասցեին:
2.8 Ակտիվացման հղումը սեղմելուց հետո Հաճախորդի համար բացվում են արժեթղթերի և բրոքերային հաշիվներ:

3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1 Մի քանի կապակցված էլեկտրոնային փաստաթղթեր (էլեկտրոնային փաստաթղթերի փաթեթ) կարող են ստորագրվել մեկ էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթղթերի փաթեթն էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրելիս այդ փաթեթում ներառված էլեկտրոնային փաստաթղթերից յուրաքանչյուրը համարվում է էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված:
3.2 Էլեկտրոնային փաստաթղթերը փոխանակվում են Ընկերության հավելվածում՝ Հաճախորդի անձնական հաշվում: Կողմերը սույնով համաձայնել են Էլեկտրոնային փաստաթղթերը ստորագրել էլեկտրոնային ստորագրության միջոցով, էլեկտրոնային ստորագրությանը տալով ձեռագիր ստորագրությանը հավասարազոր իրավական նշանակություն:
3.3 Էլեկտրոնային փաստաթուղթը համարվում է ստորագրված էլեկտրոնային ստորագրությամբ, եթե այն ստեղծվել է Հաճախորդի անձնական հաշվում՝ հավելվածի միջոցով, և նախքան ուղարկելը վավերացվել է հաստատման ծածկագրով:
3.4 Հաճախորդը պարտավորվում է ապահովել գաղտնաբառի ապահովությունը և բարդությունը՝ նվազագույնի հասցնելով դրա խախտման ռիսկը, ներառյալ հետևել անվտանգության ապահովման ընդհանուր ընդունված մեթոդներին և միջոցներին: Հաճախորդի կողմից վերը նշված պարտավորությունները չկատարելու հետևանքների պատասխանատվությունը ամբողջությամբ կրում է Հաճախորդը:
3.5 Հաստատման կոդը յուրաքանչյուր անգամ ստեղծվում է Հաճախորդի անձնական հաշվում՝ հավելվածի վրա էլեկտրոնային փաստաթուղթ ստորագրելու նպատակով և Հաճախորդին հաղորդվում է հետևյալ կարգով:

- Կամ բջջային հեռախոսահամարին տեքստային էսէմէս կարճ հաղորդագրության միջոցով և/ կամ 4 նիշանոց կոդի նշումով հաղորդագրություն ուղարկելու միջոցով:
- Կամ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող հաղորդագրության միջոցով:
- Կամ **INVIA** բջջային հավելվածի push-ծանուցման միջոցով:

3.6 Սեղմելով սույն Կանոնների հետ համաձայնության կոճակը՝ Հաճախորդը համաձայնում է օգտագործել էլեկտրոնային ստորագրությունը իր անձնական հաշվում, հավելվածում՝ հաղորդագրություններ ուղարկելու, էլեկտրոնային փաստաթղթեր մշակելու, այլ հասանելի գործողություններ կատարելու նպատակով, ինչպես նաև ընդունում է այն Ընկերությանը հետևյալ տեղեկատվության տրամադրումը՝
   1) էլեկտրոնային փաստաթուղթ ստորագրող անձին նրա էլեկտրոնային ստորագրությամբ որոշելու (նույնականացնելու) կանոններ,
   2) էլեկտրոնային ստորագրություն ստեղծող եւ (կամ) օգտագործող անձի՝ գաղտնիությունը պահպանելու պարտականությունը
3.7 Հաճախորդը ինքնուրույն և իր միջոցներով է մշակում անձնական հաշվի ներբեռնման և շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսները:

4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

4.1 Էլեկտրոնային փաստաթղթերը, որոնց էլեկտրոնային ձևով ստորագրումը չի հակասում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, կողմերը ստորագրելու համար օգտագործում են էլեկտրոնային ստորագրություն:

4.2 Էլեկտրոնային ստորագրությունն օգտագործվում է Կողմերի կողմից բացառապես փաստաթղթեր ստորագրելու նպատակով, որոնց ձևավորումն ու փոխանակումը հնարավոր է Հաճախորդի անձնական հաշվի շրջանակներում, այդ շրջանակը ներառում է, սակայն չի սահմանափակվում՝

4.2.1 Բրոքերային/արժեթղթերի հաշիվ բացելու հայտ- պայմանագրի (Պայմանագիր) ստորագրում,

4.2.2 Հաճախորդի անձնական հաշվի տեխնիկական հնարավորություններով նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի ստորագրում՝ բրոքերային ծառայություններից օգտվելիս (ներառյալ բորքերային(դիլերային) գործունեության կանոնները), պահառության գործունեությունը կարգավորող կանոնները, արժեթղթերի հետ կապված գործարքների և (կամ) ածանցյալ ֆինանսական գործիքների հետ կապված պայմանագրերի կնքման, կատարման հետ կապված ծառայություններից, արտարժույթի շուկայում գործարքներ, ինչպես նաև Ընկերության բրոքերային ծառայության կանոններով կամ Ընկերության բրոքերային ծառայության կանոններին կից լրացուցիչ համաձայնագրերով նախատեսված ծառայություններ:

4.2.3 Հաճախորդի անձնական հաշվի տեխնիկական հնարավորություններով նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի ստորագրում՝ բորքերային ծառայություններից օգտվելիս պատվերի տրամադրում, պահառության ծառայություններից օգտվելիս և Հաճախորդին պատկանող արժեթղթերի նկատմամբ սեփականության կամ այլ իրավունքների փոխանցում, վերջինս ներառում է այնպիսի ծառայություններ, որոնք նպաստում են արժեթղթերի նկատմամբ Հաճախորդի իրավունքների իրականացմանը, ինչպիսիք են դեպո գործառնությունների համար հանձնարարականների ստորագրումը, կամ այլ դիմումների, հարցումների ստորագրումը

4.2.4 Հաճախորդի անձնական հաշվի տեխնիկական հնարավորություններով սահմանված այլ փաստաթղթեր:

4.3 Կողմերը սույնով համաձայնության են գալիս ստորագրության սահմանված կարգի հետ, հաստատում են, որ գիտակցում են, որ Կողմերից որևէ մեկի կողմից էլեկտրոնային փաստաթղթերում էլեկտրոնային ստորագրության կիրառումը հավասարեցվում է ձեռագիր եղանակով ստորագրմանը, ունի Կողմերի ձեռագիր ստորագրությանը համարժեք իրավական ուժ, արտահայտում է Կողմերի ազատ կամահայտնությունը և հրաժարվում են այդ հիմքով Պայմանագրի կնքման, Պայմանագրի կնքման կարգով պայմանավորված դրա վավերության հանգամանքները վիճարկելուց, ինչպես նաև դրանց առնչությամբ որևէ բողոքարկումներ և/կամ պահանջներ ներակայացնելուց: Էլեկտրոնային ստորագրութայն կիրառմամբ ստորագրված փաստաթղթերը (բրոքերային/արժեթղթերի հաշվի բացման հայտ-պայմանագիր), պատվերը, դեպո հանձնարարականը կամ այլ փաստաթղթերը (և/կամ այլ իրավական գործողությունները) առաջացնում են նույն իրավունքները և պարտականությունները (իրավական հետևանքներ), որոնք կառաջանային, եթե այդպիսի հանձնարարականները, դիմումները, պատվերը, այլ փաստաթղթերը

(ցանկացած այլ իրավական գործողություններ) ներկայացվեին թղթի վրա՝ համապատասխան Կողմի ձեռագիր ստորագրությամբ:

5. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

5.1 Հաճախորդը լիազորում է Ընկերությանը ծառայությունների մատուցման նպատակով օգտագործել և մշակել իր անձնական տվյալները՝ ներառյալ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը և անձնագրում նշված ողջ տեղեկատվությունը (լուսանկար, ստորագրություն): Հաճախորդների անձնական տվյալները մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա, ներառյալ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքների, «Ընկերության ընդհանուր պայմաններին» միանալու համաձայնությունը կամ հաճախորդների համաձայնությունը, որը ստացվել է սույն Կանոնների այլ կերպ ընդունելու արդյունքում: Ընկերությունն իրավունք ունի օգտագործել Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և հաղորդակցման այլ տվյալներ՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական և գովազդային հաղորդագրություններ ուղարկելու նպատակով:

5.2 Անձնական տվյալները մշակելիս Ընկերությունն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով

- Նպատակների օրինականությունը, մշակման միջոցների և տվյալների հավաստիությունը,
- Անձնական տվյալների մշակման օրինականության ապահովումը՝ տվյալների մշակում սուբյեկտի համաձայնությամբ,
- Մշակման՝ հայտարարված և իրական նպատակների միջև համապատասխանություն,
- Անձնական տվյալների ծավալի և բնույթի համապատասխանություն անձնական տվյալների մշակման միջոցներին և նպատակներին,
- Մշակման նպատակներով տվյալների իրավաչափություն և մշակման նպատակներով տվյալների գերշահագործման անթույլատրելիություն,
- Տեղեկատվական համակարգերի օգտատերերին անձնական տվյալների հետ վարվելու օրինական և անվտանգ պրակտիկայի մասին ծանուցում,
- Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալների ճշգրտության, ամբողջականության, հուսալիության և անվտանգության ապահովում,
- Անձնական տվյալների մշակման և նման մշակման իրավական հետևանքների մասին սուբյեկտին տեղեկացնելը՝ հնարավորություն ընձեռելով ազդեցության ունենալ այդ տվյալների ճշգրտության և ամբողջականության վրա,
- Անձնական տվյալների մշակման մշտական ներքին հսկողություն, անձնական տվյալների մշակման գործընթացների և համակարգերի ստուգումներ անցնելու պատրաստակամություն:

5.3 Անձնական տվյալների մշակումն իրականացվում է հետևյալ նպատակներով.

- Ծառայությունների պատշաճ մատուցում, հաճախորդների սպասարկման որակի բարձրացում,

- Հաճախորդների հաշիվ բացում, հաշիվների կառավարում, խարդախությանը վերահսկում և հայտնաբերում
- Հաճախորդի ինքնության հաստատում (նույնականացում),
- Հաճախորդի անձնական տվյալների ճշգրտության ապահովում (ստուգում, պարզաբանում կամ թարմացում),
- Համապատասխանություն ՀՀ օրենսդրական ակտերի և այլ կարգավորող իրավական ակտերի պահանջներին, մասնավորապես՝ «Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջներին:

5.4 Մշակվող անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելու համար Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ իրավական, կազմակերպական, տեխնիկական պաշտպանության միջոցները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Ընկերությունը պատասխանատվություն է կրում նշված ընկերությունների անուշադրության, անփութության, տվյալների պահպանման անվտանգության և գաղտնիության պահանջների խախտման հետևանքով Հաճախորդների կրած վնասների և կորուստների համար: Բարեհաջող նույնականացումից հետո Հաճախորդը, սեղմելով հաստատման կոճակը, ընդունում է Ընկերության Բրոքերային ծառայությունների պայմաններն ու սակագները, Պահառության կանոնները և ձեռք է բերում Պայմանագրերից բխող բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

5.5 Որոշ դեպքերում Ընկերությունը կարող է իր վստահելի գործընկերներին փոխանցել Հաճախորդի անձնական տվյալները, որոնք Ընկերությանը մատուցում են այնպիսի ծառայությունները, որոնք անհրաժեշտ են Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունների մատուցման համար: Այս համագործակցությունը հիմնված է խիստ պայմանագրային պարտավորությունների վրա, որոնք ապահովում են՝ Հաճախորդի տվյալների առավելագույնս հոգատարությամբ և անհրաժեշտ ծավալով մշակումը:

5.6 Ընկերությունը սույնով հավաստիացնում է, որ Հաճախորդների տվյալները պաշտպանվում և մշակվում են գաղտնիության և անվտանգության կանոններին համապատասխան: Հաճախորդների տվյալները կարող են փոխանցվել համագործակցող ընկերություններին և իրավասու մարմիններին՝ ֆինանսական հանցագործությունների ռիսկերը կառավարելու և օրենսդրության պահանջներին համապատասխանելու նպատակով:

5.7 Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ իր տվյալների մշակման նպատակով, այլ ընկերությունների ծառայությունից օգտվելու դեպքում, Ընկերությունը կարող է նրանց փոխանցել իր տվյալները: Անկախ նրանից, թե հաճախորդի տվյալները մշակվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, թե Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, դրանք պաշտպանված են լինելու կլինեն գործող գաղտնիության և անվտանգության կանոնների պահանջներին համապատասխան և կարող են օգտագործվել միայն Ընկերության ցուցումներին համապատասխան:

5.8 Հաճախորդն ունի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներ: Հաճախորդը իրավունք ունի հետ վերցնել իր՝ անձնական տվյալները մշակելու համաձայնությունը և/կամ պահանջել՝ ջնջել իր անձնական տվյալները: Նման դեպքերում Ընկերության չի կարողանա շարունակել ծառայությունների մատուցումը: Հաճախորդը իրավունք ունի կապ հաստատել Ընկերության հետ՝ իր անձնական տվյալները շտկելու կամ փոփոխելու նպատակով, եթե դրանք սխալ են կամ արդիականացման կարիք ունեն:

Հաճախորդը իրավունք ունի բողոք ներկայացնել Ընկերությանը, եթե կարծում է, որ իր անձնական տվյալները մշակվել են խախտմամբ կամ եթե համաձայն չէ անձնական տվյալների մշակման ընթացակարգին:

6. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

6.1 Հաճախորդի համար տեխնիկական աջակցությունը ներառում է խորհրդատվություն Հաճախորդի անձնական հաշվի, Հավելվածի և Ընկերության աշխատանքի և մատուցվող ծառայությունների հետ կապված հարցերի վերաբերյալ:

6.2 Հաճախորդը կարող է դիմել Ընկերությանը՝ Ընկերության հավելվածում Հաճախորդի անձնական հաշվի հետ կապված խնդիրների կամ հարցերի՝ պարզաբանումների նպատակով:

6.3 Ընկերությունը պարտավորվում է օպերատիվ կերպով պատասխաններ տրամադրել Հաճախորդների հարցերին և, անհրաժեշտության դեպքում, տրամադրել համապատասխան նյութեր, որոնք կօգնեն լուծել առաջացած խնդիրները:

6.4 Ընկերությունը Հաճախորդին հնարավորություն է տալիս կապ հաստատել տեխնիկական աջակցության ծառայության հետ բջջային հեռախոսահամարով, էլեկտրոնային փոստով կամ Ընկերության կայքէջում նշված այլ էլեկտրոնային հաղորդագրությունների ծառայության միջոցով:

6.5 Ընկերությունը պարտավորվում է պահպանել Հաճախորդների տվյալների պաշտպանության ամենաբարձր չափանիշները՝ պարբերաբար թարմացնելով իր անվտանգության համակարգերը:

6.6 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից իր անձնական հաշվում "հիշել տվյալները" տարբերակի ընտրության հետ կապված Հաճախորդի կողմից կրած ցանկացած վնասի համար: Հաճախորդներին խորհուրդ է տրվում զգուշություն ցուցաբերել ՝ երրորդ անձանց կողմից իրենց գաղտնաբառի չարտոնված մուտքը կամ օգտագործումը կանխելու համար:

7. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԹԱՐՄԱՑՈՒՄ

7.1 Հաճախորդը պարտավորվում է արդիական պահել տրամադրված անձնական տվյալները և դրանց փոփոխության դեպքում թարմացնել/արդիականացնել դրանք:

7.2 Հաճախորդը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Ընկերությանը իր հասցեի, ռեզիդենտության կարգավիճակի, ինչպես նաև Ընկերությանը ներկայացված տեղեկություններում և փաստաթղթերում ցանկացած այլ փոփոխության մասին: Հաճախորդի կողմից նման փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու դեպքում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում առկա տեղեկատվության/փաստաթղթերի հիման վրա արժեթղթերի հաշվում կատարված գործառնությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԵՎ ԱՊԱԱԿՏԻՎԱՑՈՒՄ

8.1 Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի ապաակտիվացնել Հաճախորդի Հաշիվը:

8.2 Եթե հաճախորդը չի կատարում բրոքերային/արժեթղթերի հաշվի բացման հայտ-պայմանագրով կամ դրա անբաժանելի մաս կազմող կանոններով/կանոնակարգերով սահմանված, Ընկերության հետ կնքված պայմանագրային պարտավորությունները,

- Եթե Հաճախորդի կողմից տրամադրված տվյալների մեջ հայտնաբերվել են անճշտություններ:
- Օրենսդրական նորմերի անհամապատասխանության կամ խախտման հայտնաբերման դեպքում:
- Ընկերության ներքին որոշմամբ, որը հիմնված է գործառնական և այլ ռիսկերի գնահատման հիման վրա:

8.3 Հաճախորդը ընդունում և համաձայնում է, որ Ընկերությունը պարտավոր է հետևել օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև իրավապահ մարմինների պահանջներին՝ փողերի լվացման դեմ պայքարի և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հետ կապված: «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընկերության ներքին կանոնների և ընկերության գործունեության սկզբունքների պահանջների համաձայն՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված/կառավարվող/երրորդ անձանց կողմից ստացված միջոցների շրջանառությունն արգելվում է: Ելնելով վերոնշյալ օրենքի պահանջներից, Ընկերության կողմից փողերի լվացման դեմ պայքարի և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերի պահանջներից՝ Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության վերաբերյալ սեփական նախաձեռնությամբ հարցում կատարելու և ցանկացած պահի կարող է արգելափակել Հաճախորդի հաշիվը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության վերաբերյալ կասկածի դեպքում:

8.4 Կողմերից յուրաքանչյուրը կարող է փակել հաշիվը ՝ 10 օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին՝ հաշվի առնելով ցանկացած չկատարված պարտավորություն: Հաշիվը փակելու համար Հաճախորդը պետք է հարցում ուղարկի Ընկերությանը էլեկտրոնային փոստի, հավելվածի և/կամ Ընկերության կողմից նշված այլ եղանակով:

8.5 Այնուամենայնիվ, Ընկերությունն իրեն իրավունք է վերապահում ապաակտիվացնել Հաճախորդների հաշիվները, որոնք չեն համապատասխանում նշված չափանիշներին կամ թերի/անավարտ են: Հաճախորդից կարող է պահանջվել անցնել լրացուցիչ ստուգման փուլեր, ինչպես, օրինակ՝ նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի տրամադրում՝ նորմատիվ պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար և այլն:

9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՑ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻՍ

9.1 Հաշվի բացման գործընթացում Հաճախորդները պետք է տրամադրեն ճշգրիտ և արդի տեղեկատվություն, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ անձնական տվյալները, կոնտակտային տվյալները և ֆինանսական փաստաթղթերը:

9.2 Հաճախորդները պատասխանատու են իրենց հաշվի վավերապայմանների՝ ներառյալ գաղտնաբառի գաղտնիության և անվտանգության ապահովման համար:
9.3 Հաշվի հետ կապված ցանկացած չարտոնված մուտքի կամ կասկածելի գործողությունների մասին անհապաղ հայտնելը Հաճախորդի պարտականությունն է:
9.4 Հաճախորդները պետք է հետևեն բոլոր պայմաններին, դրույթներին և քաղաքականություններին, որոնք նախքան հաշվի բացումը և հաշվի բացման գործընթացում նախանշվել են Ընկերության կողմից:
9.5 Հաշվի հետ կապված անվտանգության միջոցների անփութության հետևանքով առաջացած ցանկացած կորստի համար պատասխանատու են Հաճախորդները:
9.6 Հաշիվների հետ կապված բոլոր վճարները ու գանձումները գիտակցելու և ընդունելու համար պատասխանատու են Հաճախորդները: Վճարների կառուցվածքների կանոնավոր վերանայումը և Ընկերության կողմից ցանկացած թարմացումների մասին տեղեկացված լինելը Հաճախորդի պարտականությունն է:
9.7 Հաճախորդը հաստատում է Ընկերության հավելվածում Հաճախորդի անձնական հաշվի հետ աշխատելու կանոններին ծանոթանալը և Հաճախորդի անձնական հաշվի միջոցով կատարվող գործողությունների բոլոր ռիսկերն ու պատասխանատվությունը:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

10.1 Կողմերը համաձայնում են վեճի դեպքում նախքան դատական գործընթաց սկսելը, վեճը լուծել բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Ընկերության և Հաճախորդի միջև ծագած վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կողմից՝ ՀՀ օրենսդրության համաձայն: Այն իրավահարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն Կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և գործարար շրջանառության սովորույթների արդյունքում ձևավորված պատշաճ պրակտիկայով:

11. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1 Ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխություններ և լրացումներ կատարել Կանոններում, հաստատել նոր խմբագրությամբ կանոններ, պարտադիր ծանուցելով Հաճախորդին ոչ ուշ, քան կանոնների փոփոխությունների, լրացումների և նոր խմբագրությամբ կանոնների ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) օրացուցային օր առաջ:
11.2 Կանոնների ցանկացած փոփոխության, լրացման կամ նոր խմբագրությամբ կանոնների վերաբերյալ Հաճախորդը ծանուցվելու է հետևյալ եղանակներով՝
  11.2.1 Փոփոխությունների կամ նոր խմբագրության ամբողջական տեքստը պարունակող ծանուցման հրապարակում Ընկերության կայքէջում՝ https://inviabroker.com/am/
  11.2.2 Փոփոխությունների ամբողջական տեքստով կամ Կանոնների նոր խմբագրությամբ էլփոստի ուղարկում, եթե առկա է ճիշտ էլ. հասցե:
  11.2.3 Ծանուցում՝ Հաճախորդի անձնական հաշվում փոփոխությունների ամբողջական տեքստը կամ կանոնների նոր խմբագրությունը հրապարակելու միջոցով:
11.3 Հավաստիանալու նպատակով, որ Հաճախորդը ծանոթ է փոփոխությունների և լրացումների ամբողջական տեքստին մինչև դրանց ուժի մեջ մտնելը, Հաճախորդը պարտավոր է կապ հաստատել Ընկերության հետ առնվազն մեկ անգամ

յուրաքանչյուր յոթ օրացուցային օրը մեկ կամ համացանցի միջոցով՝ Ընկերության կայքէջում, Հաճախորդի անձնական հաշվում, Հաճախորդի էլեկտրոնային փոստի միջոցով՝ կանոնների փոփոխությունների և լրացումների կամ կանոնների նոր խմբագրության ուժի մեջ մտնելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

11.4 Հաճախորդը որպես բավարար ապացույց է ճանաչում (դատարանում վեճերի լուծման ժամանակ ներկայացնելու համար պիտանի) Ընկերության սերվերի և Ընկերության հավելվածում Հաճախորդի անձնական հաշվի միջև տեղեկատվության փոխանակման արձանագրության էլեկտրոնային ֆայլերը:

11.5 Ընկերությունը հաճախորդին է փոխանցում Հաճախորդի անձնական հաշվի ծրագրային ապահովման օգտագործման ոչ բացառիկ իրավունքը, որը գտնվում է Ընկերության տիրույթում:

11.6 Սույն Կանոնները հանդիսանում են Բրոքերային/արժեթղթերի հաշվի բացման հայտ-պայմանագրի անբաժանելի մաս: